ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք.Երևան 07.04.2026 ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Իշխան Եղիազարյան
Հանձնժողովի անդամներ	Գևորգ Հովհաննիսյան Էդգար Միքայելյան
Հանձնաժողովի քարտուղար	Գայանե Պետրոսյան

1.1 ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20 պայմանագրի շրջանակում չներկայացված պայմանագրերի մասով

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «**ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20**» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը, քննարկելով հաղթող ճանաչված մասնակցի կողմից պայմանագրի կնքման գործընթացը, արձանագրում է հետևյալը. Հաստատվել է, որ հաղթող ճանաչված **«ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին** գնման պայմանագիրը ծանուցվել է 30.03.2026 թվականին: Օրենքով և հրավերով սահմանված կարգով՝ պայմանագիրը պետք է ներկայացվեր ծանուցումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի 5-րդ աշխատանքային օրը հանդիսանում է **06.04.2026 թվականը**: Սակայն, նշված ժամկետի ավարտի դրությամբ «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներկայացրել գնման պայմանագիրը՝ ստորագրված և համապատասխան ապահովումներով: Վերոգրյալից ելնելով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան դրույթները՝

2. Հանձնաժողովի որոշումներ.

1. «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ճանաչել պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակից:
2. Մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ սահմանված կարգով:
3. Գործընթացը շարունակել օրենքով սահմանված կարգով:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Իշխան Եղիազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գևորգ Հովհաննիսյան

_____ Էդգար Միքայելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գայանե Պետրոսյան